Դիմում Երևանի քաղաքապետին

Իրավ. անձ ԿԱՊ ՔԸՄՅՈՒՆԻԹԻ ՍՊԸ

հասցե Մաշտոցի 54 ՀՎՀՀ: 01068024

հեռ. +374 41 744 909

էլ. Փոստ. communitykap@gmail.com

ԴԻՄՈՒՄ,

Ի լրումն մեր նախորդ դիմումի՝ ներկայացնում ենք նաև «Կապ» ցուցահանդես-վաճառքի նախորդ միջոցառումներից լուսանկարներ և էսքիզներ, որոնք հնարավորություն կտան առավել հստակ պատկերացում կազմել միջոցառման ձևաչափի և արտաքին տեսքի վերաբերյալ:

Ներկայացված նյութերում կարող եք տեսնել, որ միջոցառման տարածքում, բացի մասնակից ձեռագործ բրենդների տաղավարներից, որևէ այլ տեսակի տաղավար, գովազդային վահանակ կամ գովազդային նյութ չի տեղադրվում, պահելով Ծառլ Ազնավուրի հրապարակը մաքուր և առանց ավելորդ գովազնդների:

Կրկին ցանկանում ենք հստակ ընդգծել, որ «Կապ» ցուցահանդես-վաճառքի շրջանակում մասնակիցների կողմից որևէ տեսակի գովազդի, գովազդային նյութերի, վահանակների կամ նմանատիպ միջոցների տեղադրումը **խստիվ արգելվում է**: Միջոցառման հիմնական և միակ ցուցադրական բաղադրիչը մասնակից ձեռագործ բրենդների տաղավարներն են:

Հետևաբար, միջոցառման շրջանակում որևէ գովազդային նյութի տեղադրում նախատեսված չէ, և նման նյութերի էսքիզների ներկայացման անհրաժեշտություն ևս չկա:

Ցուցահանդես-տոնավաճառի շրջանակներում կներկայացվեն բացառապես ձեռագործ ստեղծագործողներ, որոնք ներկայացնում են կերամիկա, զարդեր, ձեռագործ դեկորներ, նկարներ և այլ հեղինակային աշխատանքներ: Սննդի վաճառք իրականացնող մասնակիցներ չեն նախատեսվում:

Տվյալ միջոցառման շրջանակում երաժշտական ծրագիր նախատեսված չէ. իրականացվելու է միայն ցուցահանդես-վաճառքի հատվածը: Որպես տեխնիկական միջոց օգտագործվելու է միայն էլեկտրաէներգիա, որը մեզ տրամադրում է հարակից «Մոսկաֆե» սրճարանը:

Վստահ ենք, որ միջոցառումը կնպաստի տեղացի ստեղծագործողների ներկայացմանը և կդառնա գեղեցիկ ու համախմբող նախաձեռնություն՝ միավորելով քաղաքի բնակիչներին և հյուրերին:

«ԿԱՊ» տոնավաճառի շրջանակներում նախատեսում ենք ունենալ շուրջ 35-40 մասնակից, որոնց աշխատանքները կցուցադրվեն սեղանների վրա՝ վրաններով ծածկված ձևաչափով: Մենք երաշխավորում ենք, որ բոլոր տաղավարները կունենան պատշաճ գեղագիտական տեսք և չեն խաթարի հրապարակի ընդհանուր տեսքն ու անցուդարձը:

Հայտնում ենք նաև, որ «Կապ» ցուցահանդես-վաճառքի ողջ ընթացքում մասնակիցների կողմից արգելվում է ցանկացած տեսակի գովազդային նյութերի, վահանակների անմանատիպ միջոցների օգտագործումը: Մասնակիցները ներկայացնում են բացառապես իրենց արտադրանքը, որը հիմնականում ձեռագործ է:

Ցանկանում ենք նշել, որ մենք կհետևենք և կապահովենք մեզ հատկացված տարածքի մաքրությունը:

Կից առանձին ֆայլով ներկայացնում ենք նաև մասնակիցների ցանկը:

Նաև ցանկանում ենք մեր անկեղծ շնորհակալությունը հայտնել նախորդ դիմումների հաստատման և համագործակցության համար: Ձեր աջակցությունն ու վստահությունը մեծ նշանակություն ունեն ստեղծագործ համայնքի համար՝ հնարավորություն տալով իրականացնել մշակութային նախաձեռնություններ, որոնք նպաստում են Երևանի մշակութային կյանքի ակտիվացմանը, տեղական ստեղծագործողների զարգացմանը և ժամանակակից քաղաքային մշակույթի ձևավորմանը:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք ցանկանում հայտնել Արմինե Վարդանյանին և Ռաֆայել Գյոզալյանին՝ գործընթացի ընթացքում ցուցաբերած ուշադրության, աջակցման և համագործակցային վերաբերմունքի համար:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության և մեր նախաձեռնությանն աջակցելու համար: Հարգանքներով Կապ Համայնք: